



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ե. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 102

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ

Ք. Երևան, Չարենցի1

Գործունեությունը՝

Գորիս համայնքի միկրոռեզիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-2՝ ք. Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Աղբուլաղ, Ձորակ, Վանանդ, Որոտան, Վերիշեն, Քարահունջ բնակավայրեր) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Սյունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 102

<< 14 >> 12 2018թ.

Սյունիքի մարզի Գորիս համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված փարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-2՝ ք. Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Աղբուլաղ, Ձորակ, Վանանդ, Որոտան, Վերիշեն, Քարահունջ բնակավայրեր) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմադրույթային փաստաթուղթ.

- ազդեցության ռազմավարական գնահատման
(ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Սյունիք-2) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի պատվերով (N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/1-4): <<Սյունիք-2>> հատվածը ներառում է տարաբնակեցման համակարգի հետևյալ կետային տարրերի՝ բնակավայրերի (մեկ քաղաք և 12 գյուղ) համալիրը (Ք. Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Աղբուլաղ, Ձորակ, Վանանդ, Որոտան, Վերիշեն, Քարահունջ բնակավայրերը) և զբաղեցնում է 33604,01հա տարածք:

Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3906մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Տարաբնակեցման գծային տարրերի համակարգը հիմնված է տարածաշրջանի տարածքով ձգվող հիմնական հատակագծային գլխավոր գծային առանցքների՝ Մ-2, Մ-12, Հ-45, Ե-117 միջպետական և հանրապետական նշանակության մայրուղիների հիմնակմախքի վրա, որն էլ ապահովում է տարածաշրջանի տարածքում իրականացվող բոլոր գործառնական հատակագծային տեղաշարժերը: Բեռնաուղևորափոխադրումները



մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը այլընտրանք է <<Կապան-Քաջարան-Մեղրի>> միջպետական ճանապարհին և տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Բնակավայրերից Գորիսը, Ակները, Վերիշենը և Քարահունջը կրում են ագլոմերատիվ տարրեր՝ կազմում են մեկը մյուսի շարունակությունը և հարում են միևնույն միջպետական նշանակության Մ 12 մայրուղուն: Տարածաշրջանի մյուս բնակավայրերն ունեն ցրված տեղաբաշխում, որոշները՝ միջանցիկ, որոշները՝ փակուղային կապերով:

Գորիս համայնքի տարածքն ընդգրկում է 3 բնական լանդշաֆտային գոտիներ.

- չոր լեռնատափաստանային գոտի, որն ընդգրկում է Գորիս գետի ձախափնյա լանջերը,
- լեռնատափաստանային գոտի, որն ընդգրկում է Գորիս գետի աջափնյա լանջերը,
- անտառատափաստանային գոտի, որն ընդգրկում է Գորիս գետի միջին հոսանքը,
- չոր լեռնատափաստանային գոտում ռելիեֆը հիմնականում խիստ մասնատված է: Հետագա դասակարգման տաքսոնոմիկ միավոր է ընտրվել լանդշաֆտների քաղաքաշինական օգտագործման հիմնական ձևերը.
- Կառուցապատված և կառուցապատման ենթակա լանդշաֆտներ:
- Գյուղատնտեսական նշանակության հողահանդակներ:
- Անտառտնտեսության հողեր:

Անտառներում բացի հաճարենուց ու կաղնուց մեծ տարածում ունեն նաև պտղատու այլ վայրի ծառեր:

Տարածաշրջանի անտառները կազմում են 2647.5հա մակերես, որը կազմում է տարածաշրջանի վարչական տարածքի 8.2%-ը: Բոլոր անտառները պաշտպանական են, չունեն արդյունաբերական պաշարներ և հեռանկարում նպատակային, գործառնական նշանակության փոփոխություն չեն նախատեսվում:

Ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է անտառների միջավայրաստեղծ գործառույթի ուժեղացում՝ անտառային ռեսուրսների բարելավման և ընդլայնման միջոցառումների արդյունավետության բարձրացում: Անտառտնտեսության ծառատունկից զուրկ հատվածներում, ինչպես նաև գյուղատնտեսական այլ հողերում, բնակավայրերի այլ հողերով ներկայացված հատվածներում ծառատունկերի իրականացում, անտառային բարիքների օգտագործում (խնայողական հավաքում, վերամշակում, սպառում)՝ տեղական տնտեսության զարգացման խթանման գործընթացում:

Գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշների վերլուծությամբ պարզվել է, որ մարզում առկա է 1113.0հա պտղատու այգի, որից 25.0հա-ն ինտենսիվ այգիներ են, մնացած 1028.0հա-ն՝ ավանդական, որոնց շուրջ 60% ենթակա է թարմացման: 2018թ. նախատեսվել է ինտենսիվ այգիների մակերեսն ավելացնել ևս 45.0հա-ով՝ դարձնելով 70.0հա:

Ըստ հիմնադրույթային փաստաթղթի տվյալների տարածաշրջանի գյուղատնտեսական հողերի զգալի տոկոսը բաժին է ընկնում Խնձորեսկ բնակավայրին (24.5%): Գրեթե համազոր մեծության են Գորիս (15.9%), Ակներ (14.7%), Վերիշեն (17.2%) և



Հարթաշեն (11.4%) բնակավայրերի գյուղատնտեսական հողերի մասնաբաժինները: Մյուս բնակավայրերի գյուղատնտեսական հողերի մասնաբաժինը համայնքի ընդհանուր գյուղատնտեսական հողերի կազմում տատանվում է 2.3-6.8%-ի սահմաններում (Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Քարահունջ): Նվազագույն՝ 1.0%-ից պակաս են կազմում Որոտան բնակավայրի գյուղատնտեսական հողերի մասնաբաժինը (0.3%): Բնակչության ապահովվածությունը գյուղատնտեսական հողերով ևս տատանվում է մեկ մարդուն հասանելիք չափաբաժնի կտրվածքով՝ 0.3հա/մարդ (Որոտան) մինչև 7.4հա՝ մեկ մարդուն (Բարձրավան) սահմաններում:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Անցած սոցիալ-տնտեսական փուլում Սյունիքի մարզը տարաբնակեցվել է խիստ անհավասարաչափ: Մարզի բնակավայրերի միայն 37.5%-ն է գտնվում ինտենսիվ յուրացված գոտում, 62.5%-ը՝ թույլ յուրացված գոտում, որոնցից 21.3%-ը գտնվում է լեռնային գոտում, 16.9%-ը՝ բարձրլեռնային գոտում: Թույլ յուրացված գոտիները պահպանել են իրենց բարձր բնապահպանական հատկանիշները և ունեն բնակավայրերի տարածքային զարգացման հնարավորություններ՝ ստեղծելով նախադրյալներ լքված բնակավայրերի վերականգնման, ինժեներական, տրանսպորտային ենթակառուցվածքների կատարելագործման համար:

Տարաբնակեցման համակարգը հիմնականում ձևավորվել է ռելիեֆային առումով համեմատաբար առավել հարթ տարածքներում (լեռնահովիտներ) և դրանց հարող լանջերի ստորոտների հատվածներում: Կապված ռելիեֆային նշված առանձնահատկությունների հետ, կառուցապատումը որոշ հատվածներում կրում է ռելիեֆին ներգծված դարավանդաձև բնույթ:

Հիմնվելով ձևավորված հատակագծային կառուցվածքի՝ կետային տարրերի միջև կազմավորված ինժեներատրանսպորտային ցանցի՝ գծային տարրերի համակարգի վրա վեր են հանվել թույլ օղակները և առաջադրվել դրանց բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումները:

Տարաբնակեցման տարածքային միավորների վերլուծության շրջանակում դիտարկվել են բնակավայրերով զբաղեցված և անտրոպոգեն ազդեցության ենթարկված տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերը, բնապահպանական տարածքները (անտառներ, ջրային մակերեսներ):

Նախագծի շրջանակում դիտարկվել են ինչպես միկրոռեգիոնին առնչվող ընդհանրական ենթակառուցվածքային խնդիրները, այնպես էլ միկրոռեգիոնում ներառված յուրաքանչյուր բնակավայրի խնդիրները:

Առանձին բնակավայրերի վերլուծությամբ ի հայտ են բերվել համընդհանուր խնդիրների համալիրը, որոնք առկա են գրեթե բոլոր բնակավայրերում:

Հաղորդակցության ուղիների մասով՝ ներքին փողոցային ցանցի կարծր ծածկույթի նորոգման աշխատանքների անհրաժեշտություն, գիշերային լուսավորության համակարգի անցկացում: Ենթակառուցվածքների մասով՝ ջրամատակարարման, որոգման համակարգերի նորոգում, ընդլայնում, կոյուղու համակարգի իրականացում,



աղբահանության կազմակերպում: Քաղաքային տնտեսության մասով՝ շենքերի ընթացիկ նորգումներ, տանիքների վերանորոգում, հանրային տարածքների կազմակերպում:

Նախագծում հաշվի են առնվել նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված գերակայությունները:

Տնտեսության առկա վիճակի վերլուծություն՝ Տարածաշրջանն ունի ընդգծված ագրարային ուղղվածություն: Բնակչությունը զբաղվում է և անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, այգեգործությամբ, կարտոֆիլի մշակությամբ: Զարգացած է սննդի արդյունաբերությունը: Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (ջինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Գորիս քաղաքի տնտեսության հիմնական զարգացած ճյուղերն են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Կատարվել է նաև սոցիալական ոլորտի հաստատությունների առկա վիճակի վերլուծություն և հեռանկարային հաշվարկ:

Միկրոռեգիոնի տնտեսական և քաղաքաշինական զարգացման կանխատեսումների համար կատարվել է ռեսուրսային պոտենցիալի գնահատում և օգտագործման ռացիոնալ ուղիների կանխորոշումներ:

Տարածաշրջանի համայնքները հարուստ են պատմության և մշակութային ժառանգությամբ:

Համաձայն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկի միայն Գորիս քաղաքում հաշվառված է 157 անուն հուշարձան՝ բաղկացած 277 միավորից: Դրանցից 127-ը հանրապետական նշանակության են:

Գորիս համայնքի անզուգական բնությունը, արժեքավոր պատմաճարտարապետական հուշարձանների առկայությունը, որոնցից հատկապես արժեքավոր են բազմաթիվ բնական ու արհեստական քարայրները և բնակելի տները, անկասկած, կարող են նպաստել տեղական ու օտարերկրյա զբոսաշրջության զարգացմանը:

Զբոսաշրջային ոլորտում որոշակի տեղ է պատկանում նաև բնության հատուկ պահպանվող տարածքներին, ընդ որում տվյալ ոլորտում նշված տարածքների ընդգրկումը պետք է ենթարկվի որոշակի սահմանափակումների և հստակ կանոնակարգերի (ռեգլամենտի)՝ այցելությունների սեզոնայնություն, տևողություն, երթուղի, մարդկանց քանակ, տրանսպորտային միջոցի տեսակ և այլն:



Վերլուծության է ենթարկվել և սահմանվել բնապահպանական հիմնականախքի ձևավորման համար անհրաժեշտ տարածքների օգտագործման հարաբերակցությունները, այն է՝ բնական լանդշաֆտների, գյուղատնտեսական հողատեսքերի և ուրբանացված տարածքների այնպիսի հարաբերակցություն, որի ժամանակ կպահպանվի բնապահպանական հավասարակշռությունը:

Բնակավայրերը ձևավորվել են հիմնականում հաշվի առնելով բնական ռելիեֆային հիմնականում հարթ պայմանները:

Մատչելիության գոտիների հաշվառումով համայնքների տարածքներում տեղաբաշխված են նախակրթական և կրթական հաստատությունները, ներկայացված հիմնականում 2-3 հարկանի տիպարային նախագծերի հիման վրա կառուցված շենքերով: Տեխնիկական առումով դարձյալ որոշները հիմնանորոգված են, մյուսները՝ մասնակի նորոգված են և մնացած հատվածը գտնվում է ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանի և խիստ կարիք ունեն հիմնանորոգման և արդիականացման:

Առանձին բնակավայրերի հատակագծային կառուցվածքի և հեռանկարային առաջարկների շրջանակում պարզվել է հետևյալը՝ միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի գերակշիռ մասի հատակագծային կառուցվածքները ձևավորվել են տարերայնորեն՝ պատմականորեն ձևավորված քաղաքային միջուկի շուրջ: Բնակավայրերի ծայրամասային հատվածներից շատերում առկա են չօգտագործվող կամ չիջին մասով օգտագործվող արտադրական տարածքներ: Նախագծով առաջարկվել է դրանք վերակազմավորել արդի պահանջներին համապատասխան, որպես տարբեր տիպի հանրահին տարածքներ (ուսումնաարհեստագործական, ստեղծարար տեխնոլոգիաների ներդրման, ժամանցային, մարզական և այլն): Այս կերպ աշխուժացնելով բնակավայրերի հատակագծային կառուցվածքի բոլոր հատվածները, ինչը կնպաստի նաև տվյալ հատվածների անվտանգությանը:

Փողոցային ցանցը հիմնականում կազմված է հիմնական մայրուղիների զուգահեռ և ուղղահայաց կառուցվածքից: Դրանց որոշ մասի ծածկույթը քայքայված է և կարիք ունի նորոգման: Ընդհանուր առմամբ փողոցային ցանցը բավարար է:

Կառուցապատումը կրում է հիմնականում սակավահարկ (1-2 հազվադեպ՝ 3) հարկանի բնույթ:

Կոշտ կենցաղային թափոնների մասով ներկայումս համայնքում աղբահանությունն իրականացվում է «Գորիս համայնքի բարեկարգում և բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից:

Չնայած աղբահանող կազմակերպությունն աղբահանություն է իրականացնում 8 բնակավայրերում, սակայն Գորիսի բոլոր թաղամասերում և համայնքի գյուղական բնակավայրերում ևս իրականացվում է ամենօրյա աղբահանություն:

Համայնքի գյուղական բնակավայրերում, ինչպես նաև գյուղականին մոտ կենցաղավարություն ունեցող Գորիս քաղաքի անհատական բնակելի տների սեկտորում, սննդային թափոնները հիմնականում օգտագործվում են տնային տնտեսությունների կողմից: Չի հեռացվում նաև պլաստիկ թափոնների մի մասը, որոնք բնակչության կողմից նույնպես օգտագործվում են կենցաղում տարբեր նպատակներով:

Աղբավայրը գտնվում է Գորիս քաղաքից 2.0կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 2.0հա տարածք: Այն տեղադրված է նախկին հանքերի տեղում: Աղբավայրը պատկանում է համայնքին և ունի շահագործման թույլտվություն:

«Սյունիք-2» համայնքներում տեղակայված է 23 գերեզմանոց, ընդհանուր՝ 45.6հա տարածքում: Գերեզմանոցները գործող են: Գորիս քաղաքում գործում է 3 գերեզմանոց,



մնացած համայնքներում գործում է 1 գերեզմանոց: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ, ուստի անհրաժեշտ է մշակել միջոցառումներ որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

Ինժեներական ենթակառուցվածքների մասով կատարվել են հետևյալ մշակումները. մարզի 26 բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերի կողմից, ինչի արդյունքում բնակավայրերի զգալի մասն ունի կայուն ջրամատակարարում:

Մարզում խմելու ջրի մատակարարման հետ կապված խնդիրները հատկապես գերակա են սահմանամերձ և մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքների համար: Որոշ համայնքներում իրավիճակը հատկապես սրվում է ամռանը՝ պայմանավորված ոռոգման ջրի բացակայությամբ, երբ խմելու ջուրն օգտագործվում է նաև ոռոգման նպատակով: Ներկայումս Գորիս քաղաքն ապահովված է խմելու ջրի շուրջօրյա մատակարարմամբ: Ջրամատակարարումն իրականացվում է «Մուխուրթուրյան» և «Ակներ» աղբյուրներից՝ ինքնահոս եղանակով: «Ակներ» աղբյուրները գտնվում են 2150.0մ բացարձակ նիշի վրա, որից Գորիս քաղաքին տրվում է 100լ/վրկ ջրաքանակ: Գյուղական բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է մակերևութային ջրաղբյուրներից: Ջրամատակարարման համակարգերի գլխամասային կառույցները և օրվա կարգավորիչ ջրամբարները (ՕԿՋ) հիմնականում չունեն սանիտարական պահպանության գոտիներ: Գյուղական բնակավայրերի զգալի մասում բացակայում են օրվա կարգավորիչ ջրամբարները, և խմելու ջուրն անմիջապես տրվում է բաշխիչ ցանց՝ առանց վնասազերծման: Ջրամատակարարման ներքին բաշխիչ ցանցերի զգալի մասը գտնվում է անհուսալի վիճակում: Դրանք ֆիզիկապես մաշված են, քայքայված, ինչի հետևանքով հոսակորուստները զգալի տոկոս են կազմում:

Պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի խմելու ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար կիրառելով ճնշման կարգավորիչներ կամ նախատեսելով նոր ՕԿՋ-ներ:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը վտանգավոր է շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար: Մարզի ջրային ռեսուրսների, ոռոգման ջրատարների և գետերի աղտոտվածության հիմնական պատճառը տարեցտարի ավելացող կենցաղային կեղտաջրերն են:

Գորիս քաղաքը չունի կոյուղու մաքրման կայան: Թեև քաղաքը կոյուղացված է 90%-ով, սակայն կոյուղու հոսքաջրերը քաղաքի մեջ 3 տեղում թափվում են Վարարակն գետը՝ գլխավոր կոլեկտորի անավարտ լինելու և դրա որոշ հատվածների անսարքության պատճառով: Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել համայնքի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարերի միջոցով: Քարահունջ գյուղից հարավ, Վարարակ գետի աջ ափին, ճանապարհի և գետի միջև ընկած տարածքում, Ակներ, Վերիշեն, Գորիս և Քարահունջ բնակավայրերի համար նախատեսվում է նոր, ժամանակակից տեխնոլոգիաներով, 15.0հազ.մ³ հզորությամբ կոյուղու կենսաբանական մաքրման կայան:



Համայնքի մյուս բնակավայրերում առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ:

Տարածաշրջանով անցնող գետերի ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու, ջրապահովվածությունը բարձրացնելու, ինչպես նաև կանոնավոր ոռոգման ջրի մատակարարում ապահովելու նպատակով նախատեսվում է ոռոգման ջրի անարդյունավետ համակարգերի փոխարինում, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը: Առաջարկվել է կաթիլային համակարգի ներդրումը, որի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԵՑ» ՓԲԸ-ի «Տաթև» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Սյունիքում գազաֆիկացումը կազմում է 35%: Ընդ որում այն իրականացվել է մարզի համեմատաբար խոշոր բնակավայրերում՝ Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան քաղաքներում:

Դիտարկվել է նաև այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը: Հաշվի առնելով սույն նախագծով ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները (արևափայլի տարեկան տևողությունը հասնում է շուրջ 2120 ժամի), որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր նպատակահարմար է դիտարկել արևի էներգիան՝ ինչպես ջերմամատակարարման, այնպես էլ էլեկտրամատակարարման բնագավառում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սել/USU ապրանքանիշ) և «Յուքոմ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով/օպտիկամանրաթելային և եթերային-շարժական/ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Հիմք ընդունելով առկա վիճակի վերլուծությունը և ՀՀ կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը նախանշվել է, որ զարգացումը մարզում կապահովվի հետևյալ ուղղություններով.

- լեռնահանքային արդյունաբերության արդյունավետության բարձրացում և բնապահպանական ռիսկերի առավելագույնս նվազեցում,
- էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- արդյունաբերության ճյուղերի դիվերսիֆիկացում, ձևավորելով նոր արտադրություններ, որոնք միտված կլինեն ինչպես արտահանման, այնպես էլ տեղական լեռնահանքային հսկաների սպասարկմանը,
- գյուղատնտեսության և գյուղական տարածքների արդիականացում՝ համակցված բնապահպանության հետ, արդիական և զարգացած գյուղատնտեսությունը հնարավորություն կընձեռնի զարգացնել գյուղական տարածքները, խթան կհանդիսանա գյուղատնտեսության հետ կապված արդյունաբերության ճյուղերի զարգացմանը
- մարզի աշխարհագրական դիրքի առավել արդյունավետ օգտագործում, մասնավորապես Հյուսիս-հարավ տրանսպորտային ենթակառուցվածքի շուրջ տարբեր



ծառայությունների ձևավորում, Մեղրու ազատ տնտեսական գոտու կայացում, այլ ենթակառուցվածքների զարգացում,

• զբոսաշրջության զարգացման խթանում՝ ապահովելով անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Նշված միջոցառումները կտեղայնացվեն մարզի տարբեր տարածքներում՝ առկա ներուժին և զարգացման հեռանկարներին համապատասխան:

<<Սյունիք-2>> զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը՝ նախատեսվող հետևյալ միջոցառումների արդյունքում.

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում;
- Նորաշենիկի ջրամբարի կառուցում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- Գորիս գետ թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- Մ-2 միջպետական ճանապարհի 6.5կմ երկարությամբ հատվածի դուրսբերում Գորիս քաղաքից,
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման կազմակերպում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի կառուցում, աղբամշակման գործարանի կառուցում:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված հիմնադրույթային փաստաթուղթը, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների կարծիքը, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողություններն ու առաջարկությունները, Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման փաստաթղթերի հիերարխիական կառուցվածքի երեք մակարդակը (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր



հատակագիծ, գոտևորման նախագիծ) միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը, հետապնդելով մեկ նպատակ՝ բնակչության և այցելուների համար ձևավորել առավել հարմարավետ, անվտանգ, ապահով և գեղագիտական բարձր հատկանիշներով օժտված գրավիչ կենսամիջավայր:

Փորձաքննական պահանջներ

1. Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում իրականացվող նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
2. Հիմնադրույթային փաստաթղթի գործունեության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հանրության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայնախագիծ>> ԲԲԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Գորիս համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի (Սյունիք-2՝ ք. Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շոտնուխ, Աղբուլաղ, Ձորակ, Վանանդ, Որոտան, Վերիշեն, Քարահունջ բնակավայրեր) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Կ. Մովսիսյան

